

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՄ ԱԼԵԶԱՆՅԱՆ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի 80-ամյակին նվիրված «Գրականագիտական և բանասիրական ուսումնասիրություններ» գիրքն (2004թ.) ընդգրկում է Դ. Թումանյանի, Դովի. Դովաննիսյանի, Սիամանթոյի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Դ. Դեմիրճյանի, Զառնապետի, Ջապել Եսայանի գրական ժառանգության ինչ-ինչ խնդիրների հետազոտություններ և կենսագրական տեղեկատվություն: Գիրքն սկսվում է Ազատ Եղիազարյանի հիշատակի խոսքով: Երախտագիտության ու ականաժանքի զգացական խորք ունեցող այդ հակիրճ շարադրանքում գնահատվել է անվանի գրականագետ Էդ. Ջրբաշյանի գիտական և մանկավարժական գործը, դիմանկարի և հուշագրության ժանրին հատուկ էական գծերի շեշտադրմամբ և մեկ-երկու կենսագրական դրվագների պատուհով հիշատակվել են գիտնականին և քաղաքացուն արժևորող սկզբունքային հատկություններ:

«Թումանյանը ժամանակակիցների հուշերում» հոդվածում գրականագետ Լուսիկ Կարապետյանը, կարևորելով այն հանգամանքը, որ Դովհաննես Թումանյանը քառորդ դար հայ մշակութային, քաղաքական և հասարակական կյանքի կիզակետում էր, ինչի պատճառով նրան ներկայացնող հուշագրությունը անուղղակիորեն առնչվում է այդ ոլորտների ընդհանուր խնդրադրությանը և մասնակիորեն արտացոլում այն, առաջադրում է բանաստեղծի մասին եղած հուշագրության հրատարակման և քննական ճշտեցման ժամանակագրական կարգը՝ պատմականության սկզբունքի տեսանկյունից հիմնավորելով հետազոտության այդ եղանակի արդյունավետությունը: Այդ առումով, առանձնահատուկ արժեք են ներկայացնում Թումանյանի մասին նրան ժամանակակից հայ մշակույթի դասականների հուշագրական նյութերը, որոնցում դրսևորվում են նաև հուշագրի գեղագիտական ըմբռնումները, ժամանակաշրջանի պատկերացումները գրական այս կամ այն խնդրի շուրջ, մամուլի և գրաքննադատության բնույթը, ինչը, ըստ հոդվածագրի, այդ հուշագրությանը հաղորդում է ոչ միայն պատմամշակութային, այլև ճանաչողական արժեք: Դուշագրական այդ ժառանգու-

յունը ընճելով փաստագիտական առավել հարուստ տեղեկացվածության համապատկերում՝ գրականագետը հուշում է նյութերից օգտվել վերապահությամբ և զգուշորեն, հաշվի առնելով այդ ժանրին բնորոշ սուբյեկտիվիզմը: Այդ հետևությամբ՝ Գ. Թումանյանի առաջին բանաստեղծական ժողովածուի շուրջ եղած դրվատական և բացասական կարծիքները, ինչպես նաև հուշագրական տեղեկատվությունը հողվածում հետազոտվում են համեմատական և համադրական ըննությամբ, գնահատվում և իմաստավորվում են ժամանակաշրջանի հասարա-քաղաքական և գրական հոսանքների բախման համապատկերում: Գ. Թումանյանի գիտական կենսագրությունն առավել ամբողջացնելու տեսանկյունից, հողվածագրի կարծիքով, նույնչափ կարևոր են Ամենայն հայոց բանաստեղծի կյանքից ինչ-ինչ դրվագներ պատկերող հուշագրական նյութերը, հանպատրաստից հնչեցրած խոհերի ու տեսակետների, հակումների ու նախասիրությունների հիշատակումները, որոնցով առավել կենդանի և ամբողջական է ներկայանում նրա անհատականությունը:

Չովի. Թումանյանի կյանքի և գրական գործունեության նոր էջ է ցուցադրվում Սուսաննա Չովիանիսյանի «Անդիպ էջեր Դ. Դեմիրճյանի և Գ. Թումանյանի ժառանգությունից (Վերնատան կատակ-բանաստեղծությունները)» ուսումնասիրությամբ: Հողվածի արժեքավոր տեղեկատվությունը ընթերցողին հաղորդ է դարձնում «Վերնատան» անդամների գեղագիտական նախասիրություններին, համաշխարհային գրականության դասական արժեքների, բանահյուսության, արվեստի տեսության, գրական հին ու նոր սերունդների փոխհարաբերության հարցերի համատեղ վերարծարծումներին, քննարկումներին: Ամենայն հավանականությամբ, մշակույթը ազգային ոգու, հոգեկերտվածքի արտահայտություն դիտելու գեղագիտական սկզբունքը իմացաբանորեն մտակարգվել է մասամբ «Վերնատան» քննարկումների ընթացքում: Այստեղից հետևում է, որ «Գրականությունը հայրենիք չունի, բայց յուրաքանչյուր հայրենիք իր գրականությունն ունի» թումանյանական սկզբունքային-այս ըմբռնմանը համախոհ «Վերնատան» անդամների համար մշակույթն, ըստ էության, իմաստավորվում էր ոչ միայն գեղագիտական, այլև գոյաբանական դերառությամբ: Պատահական չէ, որ 1921թ. Ավ. Իսահակյանին գրած նամակում Գ. Թումանյանը հորդորում էր նրան վերադառնալ հայրենիք՝ գրելով՝ «Թերևս այժմ կազմենք մեր Վերնատունը մեր երկրում»:

Հողվածից ծանոթանում ենք նաև «Վերնատան» անդամների ընթերցողին անհայտ գվարձալի ու սրամիտ պատմություններին, հանպատրաստից կատակներին, համաշխարհային դասականների անուններով իրենց կատակով «նծարելուն», լույս իրար հասցեագրած գրչի հանաքներին և երգիծական բնույթի գրություններին, բացիկներին, որոնց պատճառած հոգեկան վայելքը արդյունք է ոչ միայն գրությունների կատակային բնույթի, այլև գրողի անձնական կյանքին և վարագուրված կենցաղավարությամբ, ըստ էության, գաղտնիքի հա-

դորդակից դառնալու ընթերցողի ենթագիտակցական գայթակղության: Հատկապես կատակախառը գրություններ է թողել Դ. Դեմիրճյանը, իսկ, Ավ. Իսահակյանի բնորոշմամբ, իր հումորով, կախարդիչ լեզվով, մտքի, խոսքի, ճաշակի հմայիչ գյուտերով Թումանյանը «Վերնատան» զարդն էր:

Լուսիկ Կարապետյանի և Սուսաննա Հովհաննիսյանի հողվածներում հետազոտված նյութերը արժեքավոր են Հ. Թումանյանի ժառանգությունը հատկապես կենսագրական-հոգեբանական եղանակով հետազոտողների համար:

Համեմատական գրականագիտությանը հատուկ հետազոտական եղանակներով Ելենա Ալեքսանյանը զուգահեռներ է անց կացնում Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազարի» և Գոգոլի «Ուկիզորի» գլխավոր հերոսների միջև «Քաջ Նազարի կերպարի համապարփակությունը» հողվածում: Գրականագետի կարծիքով, մերկ և արկածախնդիր արքաների ապամիջականացման իրողությունը հարուցվում է և քննելի է ազգային ինքնագիտակցության զարգացման համատեքստում: Ըստ էության, քաջնազարականությունը տարբեր ժողովուրդների պատմության կենդանի հյուսվածքում ի հայտ եկող և բանահյուսության ու գրականության մեջ շրջող համընդհանուր երևույթ է, ինչն էլ հնարավորություն է տալիս թեմայի և կերպարների տիպաբանական ընդհանրությունների քննության: Ի՛դեպ, Նազարի և Խլեստակովի կերպարի նմանությունների մասին գրել է նաև Դ. Դեմիրճյանը: Հողվածում քննվում են բնավորության, հոգեկերտվածքի, երջանիկ պատահականության, հանգամանքների բարեհաջող համադրության, էության և երևույթի անհամապատասխանության գեղարվեստական կիրարկումներ, ինչը և կոմիզմի և դրա դրսևորման ձևերի ու արտահայտությունների հիմքն է վերոհիշյալ կատակերգություններում: Հողվածում համեմատվում են նաև Հ. Թումանյանի և Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար»-ները, շեշտադրվում է դրանց փիլիսոփայական ենթատեքստը:

Ալեխտա Դոլուխանյանի «Էդվարդ Ջրբաշյանի «Վահան Տերյանի տաղաչափական համակարգը» հետազոտությունը» գրախոսականում իմաստավորվում և զննատվում է գրքի գիտական արժեքը, ինչը անվանի գրականագետի երկրանյա և ջանադիր աշխատանքի արդյունքն էր և լույս էր տեսել 1995 թվին: Էդ. Ջրբաշյանի այս աշխատությունը Ա. Դոլուխանյանը քննում և իմաստավորում է հայ տաղաչափական արվեստի արժատական ուսումնասիրությունների համատեքստում: Հետազոտությունը, գրականագետի կարծիքով, իրավամբ լրացնում է Մանուկ Աբեղյանի և Ավետիք Բահաթրյանի տաղաչափական հետազոտությունները, քանի որ դրանում բացահայտված են հայ բանաստեղծական արվեստի տաղաչափական նոր նրբերանգներ և արտահայտություններ: Մասնակիորեն ներկայացվում և զննատվում են գիտնականի կողմից բացահայտված՝ Վ. Տերյանի պոեզիայի և կատարած թարգմանությունների տաղաչափական որոշ առանձնահատկություններ:

Իսահակյանագիտությունը հարստացնող արժեքավոր հետազոտություն է

Ալբերտ Մուշեղյանի «Գյոթեն Ավ. Իսահակյանի ստեղծագործության մեջ և նրա բանաստեղծական ընկալմամբ» համեմատաբար ծավալուն շարադրանքը: Այդ թեմայով Ա. Մուշեղյանը զեկուցել է 1982թ. ապրիլի 12-13-ին Մոսկվայի Մ. Գորկու անվան Յանաշխարհային գրականության ինստիտուտում Գյոթեի մահվան 150-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում և ապա՝ 2000թ. հոկտեմբերի 28-ին ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի՝ Ավ. Իսահակյանի ծննդյան 125-ամյակին նվիրված գիտաժողովում: Գիտնականի վկայությամբ՝ ուսումնասիրությունը ներառում է մինչ այժմ շրջանառության մեջ չեղած բազմաթիվ նոր փաստեր և արխիվային վավերագրեր: Հոդվածում Գյոթեի գրական վիթխարի ժառանգության էությունը հալանցիկ ներկայացվում է լուսավորականության, սենտիմենտալիզմի, ավելի ուշ կլասիցիզմի նորմատիվ գեղագիտությունը մերժող «գրոհ և փոթորիկի» գրական շարժման (ինչին մասնակիորեն առնչվում կամ հակադրվում է Գյոթեի ժառանգությունը՝ վերթերիզմ, վայմարյան կլասիցիզմ, դասական ռեալիզմ, արևելյան ռոմանտիկա) գեղարվեստական մեթոդների և գեղագիտական դպրոցների հերթագայության ֆոնի վրա: Հոդվածը հարուստ տեղեկություններ է պարունակում հայ պարբերական մամուլի էջերում սփռված Գյոթեի բանաստեղծությունների, ասույթների հայացման պատմության մասին: Գրականագետը, ի դեպ, անդրադարձել է ոչ միայն Գյոթեի առանձին երկերի թարգմանություններին, այլև այս կամ այն հայ մտավորականի շարադրանքում հանդիպող նրա մտքերին և ասույթներին:

Իսահակյանագիտության համար առանձնահատուկ արժեք ունի Իսահակյան-Գյոթե ստեղծագործական առնչությունների դիտարկումը կատարված հետազոտության մեջ, որոնց բացահայտումը գրականագետի կողմից ավելի է որոշակիացնում Ավ. Իսահակյանի գեղագիտական ըմբռնումների և կենսափիլիսոփայության ուսումնառության և որոշարկման շրջանակները: Իսահակյանի և Գյոթեի որոշ բանաստեղծությունների տեքստերի զուգահեռ քննությամբ գրականագետը պարզում է Գյոթեի բանաստեղծությունների ազդեցության բնույթն ու արտահայտություններն Ավ. Իսահակյանի պոեզիայում: Զննված են Ավ. Իսահակյանի սիրային պոեզիայի կենսական կոնկրետ ազդակների և որոշ արտահայտչական նրբերանգների առնչությունները նաև «Վերթերի» հետ: Հետազոտության էջերում որոշակիորեն բացահայտված են Գյոթեի «էլեգիա» բանաստեղծության ազդեցության դրսևորումները Ավ. Իսահակյանի երկերում («Սասադիի վերջին գարունը», «Գյոթեի վերջին սերը» ձեռագիր մտորումները): «էլեգիայի» հանդեպ արդեն ծերունագարո հայ բանաստեղծի վերաբերմունքը, ըստ հեղինակի, «գրական աղետից զատ, հոգեբանական լուրջ հետաքրքրություն է ներկայացնում գրականագետի համար»՝ դրանով իսկ շեշտադրելով խնդիրը նաև կենսագրական-հոգեբանական եղանակով քննելու անհրաժեշտությունը: Ուսումնառության նշված շրջանակներում իսահակյանագիտության համար ա-

ռավել համագամնալից՝ քննության խնդիր է դառնում «Հայկական Ֆաուստ» պոեմ ստեղծելու Ավ. Իսահակյանի ծրագիրը: Հայ բանաստեղծի հափշտակվածությունը Գյոթեի ստեղծագործությամբ արտահայտվում է նաև նրանից կատարած թարգմանություններով: Ա. Մուշեղյանի հետազոտությունն ունի գիտական արժեք ներկայացնող ծանոթագրություններ և մատենագիտություն:

Վլադիմիր Կիրակոսյանի «Սիամանթոյի արվեստի ուրվագծեր» հոդվածում քննվում են Սիամանթոյի անհատականության բանաստեղծական փոխաձևման կերպը: Խորացնելով Վարուժանի՝ «Սիամանթոն կիկլոպ մըն է... որ ամեն բան կը տեսնեն հսկայական համեմատությամբ» ելակետային բնորոշումը, հետազոտողը պարզում է Սիամանթոյի պոետական մտածողությունը հատկանշող այս իրողության հոգեբանական խորքային պատճառաբանությունը: Ըստ էության, տեսանելի իրականության մղծավանջային պատկերների և տպավորությունների վերապրումները բանաստեղծական փոխաձևության են ենթարկվում՝ անցնելով Սիամանթոյի հոգում լեռնացած «ցեղի տիեզերածավալ ցավի գեղադիտակով»: Բանաստեղծը ստեղծագործական խորը դրամա է ապրում համազգային արհավիրքի այդ օրերին, նաև այն պատճառով, որ ժամանակաշրջանը պատեի չէր համամարդկային իդեալներ հնչեցնելու համար: Պատմական պահի հրամայականը ազգային քաղաքական խնդիրների լուծումն էր, ինչը, ըստ գրականագետի, երկատում էր բանաստեղծի հոգին պարտքի և կոչման բևեռների միջև: «Պառակտված հոգու այս դրաման էլ պիտի որոշեր 20-րդ դարասկզբի հատկապես արևմտահայ բանաստեղծության ճակատագիրը», - ընդհանրացնում է գրականագետը: Ինքնօտարման, երկատվածության, ինքնահրաժարումի այս ցավագին դրաման ձևավորում է «որոշակի հոգեբանություն, մի համաժավալ ներքին տեսողություն, որի կրողն արդեն ոչ այնքան բանաստեղծի անձն է, որքան նրանից օտարված մի երկրորդ ես-ը», որը ներկա է նրա ողջ ստեղծագործության մեջ: Վերջինիս ողբերգությունը ծնվում է կլասիցիզմին բնորոշ «քաղաքացիական պարտքի ու անձնական մղումների անհամատեղելիությունից», քանի որ «նրան էլ հատուկ է ինքնօտարումի հարկադրյալ հոգեբանությունը»: Այդ տեսանկյունից, հոդվածում բացահայտվում է նաև Սիամանթոյի բանաստեղծական արվեստի կառուցվածքային և պատկերավորման յուրահատկությունը:

Ինքնատիպ դիտարկում է հիմնավորում Լաուրա Մուրադյանը «Հովհաննես Հովհաննիսյանի ստեղծագործությունը ժամանակի հոլովություն» հոդվածում, որի էջերում պատմական տարբեր ժամանակների քննական անդրադարձումների համեմատական և համադրական քննությամբ բացահայտում է բանաստեղծի ժառանգության պատմաֆունկցիոնալ արժեքն ու նշանակությունը ոչ միայն նրա ապրած ժամանակաշրջանի, այլև հետագա ժամանակների համար, ինչը, իրավամբ, դիտում է որպես վերջինիս գեղարվեստական արժեքի ցուցիչ: Հոդվածի տարբերակված քննությունից հայտնի է դառնում, որ եթե Ղ. Աղայանի, Գ. Ենգի-

բարյանի, Ս. Սանդիկյանի գրախոսականներում գնահատվում է Դովի. Դովիան-նիսյանի բանաստեղծական մուտքը ժամանակի պոեզիայի զարգացման գլխավոր միտումների և տրամաբանության լուսի ներքո, ապա Լ. Բաշալյանի 1887 թ. գրած մի գրախոսությամբ արդեն շեշտադրվում է բանաստեղծական մտածողության նոր որակը հայ պոեզիայի զարգացման հոլովությամբ: Գրախոսը ընդգծում է նաև նոր գործառական եզրեր նրա պոեզիայում, ինչը Ավ. Իսահակյանի բնորոշմամբ «բանաստեղծության այն ոսկեղեն աղբյուրն էր, որ կարկաչում էր հայոց հին ու նոր երգերի սահմանագծում», ժամանակաշրջան, երբ «հայ բանաստեղծական միտքը ազգային-հայրենասիրականից պիտի անցներ լիրիկ անհատական աշխարհը» (Գ. Վանցյան): Դետագա քննադատության կողմից Դովիանիսյանի ժառանգությունը նույնպես բարձր է գնահատվում՝ շեշտադրելով նրա լիրիզմը, անձնական քնարերգությունը, և հոգեհարազատությունը ժողովրդական լեզվամտածողությանը: Դիտարկվում են բանաստեղծին տրված գնահատականները նաև վերջին շրջանի հայ քննադատության կողմից, որոնցում ընդգծվում են դրա պատմական դերը և գեղարվեստական արժեքը: Ներկայացված են նաև Վ. Բյուրևուկի, Ա. Վեսելովսկու, Պ. Տիչինայի բնութագրումները:

Գրականագիտական արժեքավոր հետազոտություն է վաղամեռիկ գիտնական Գրիգոր Դակոբյանի «Գրական սկանդալից» մինչև «սիրո հաշվեփակ» ըստ Զապել Եսայանի» հոդվածը, որն այդ թեմայով կատարված հետազոտության մի մասն է միայն: Դետազոտությունն ուղեկցվում է ծավալուն և գիտական արժեքներ կայացնող ծանոթագրություններով: Զապել Եսայանի գեղագիտական սկզբունքներից որոշարկվող նորարարական, սկզբնաղի որոշ իրողություններ, վիպագրական ինչ-ինչ խնդիրներ դիտարկվում են ֆեմինիստական գրականության համայնապատկերում, ինչը, ըստ հոդվածի, որոշակիացնում է դարասկզբի «հարուստ, բազմազան գրական, մշակութային-հանրային կյանքի կենսոլորտը» հեղինակի ստեղծագործության համատեքստում: Ստեղծաբանական-ստեղծագործական առումով գրողի մուտքը դիմորոշողը, Գրիգոր Դակոբյանի կարծիքով, գրական սկանդալն էր, ինչից և որոշարկվում է նախաստիպերի կիրարկման բոլորովին նոր, ոչ նորմատիվ եղանակ: Դեղինակը, նման պարագայում, կենտրոնացնում է բացառապես նախաստիպի անձին՝ ջանալով անբաջույց հասնել բնավորության համարժեք փոխանցման: Ըստ էության, նախաստիպը «բնագիր է անցնում բացահայտ հպակնարկային կեղծանուններով, որպեսզի ընթերցողը ճանաչի նախաստիպին, կամ՝ հակառակ-հանվանե...հերոսների կենսագրական բոլոր հանգամանքները նույնական են նախաստիպերի կենսագրական հանգամանքներին ու փաստերին»: Զ. Եսայանի բնագրաստեղծման ելակետային սկզբունքը, անկասկած, հայ գրականության մեջ ուներ կիրարկման ավանդներ (Ս. Մամուրյան, Դ. Պարոնյան, Երվանդ Օտյան և այլք), ինչը տարբերակված ձևով ներկայացվում է այս հետազոտության շարադրանքում: Զ. Եսա-

յանի մուտքը գրական ասպարեզ, ըստ հետազոտողի, նշանավորեց նաև համատեղ բնագրաստեղծման բոլորովին նոր մի եղանակով, ինչը գրականության պատմության մեջ նույնպես ուներ իր նախադեպերը: Պայմանականորեն անվանված համաերկր 2. Եսայանի և Արտաշես Զարությունյանի ստեղծագործական համագործակցության արդյունքն է, ինչի հիմքում ընկած են նրանց անձնական հարաբերությունները և առնչությունները, մտերմությունը, փոխադարձ հաիշտակվածությունը: Մեկի երկն, ըստ էության, դառնում է մյուսի ստեղծագործության յուրօրինակ պատասխանը: Այսինքն՝ գեղարվեստական համակարգ է «փոխադրվում այլ գրողի, կամ արվեստագետի ոչ միայն ստեղծագործությունը, պատկերը, հղացքը, բնագրաստեղծ ուրիշ տարրեր, այլև՝ գրող, արվեստագետ երևույթը պարագրող բնավորությունը, մարդկային նկարագիրը, գոյության հույժ անձնական հատկանիշները»: Կարծում ենք, որ այս իրողությունը որպես «գրողական խառնվածքի ինքնարտահայտման միջոց», «նրա խառնվածքի տարրերը» դիտարկելով, գրականագետը հետազոտական արդյունավետ եղանակ է որդեգրել՝ 2. Եսայանի «վիպագրության ժանրային հանդուգն փորձարարության և եվրոպական դեկադենտական վիպագրության սկզբունքների ինքնատիպ համադրականության» ծագումնաբանությունը իրավացիորեն առաջին հերթին պատճառաբանելով մեր գրականագիտության կողմից ոչ այնքան հաճախ կիրարկվող կենսագրական-հոգեբանական գործոններով (բնավորություն, խառնվածք, ժանրություններ, գրական շփումներ, կենսագրական հակիրճ տեղեկանք) և նոր՝ ուսումնառությամբ ու ազդեցություններով:

Գիրքն ավարտվում է Մարգարիտ Խաչատրյանի «Ամերիկահայ իրականությունը Զամաստեղի ստեղծագործություններում» հոդվածով: Վերլուծված են գրողի ստեղծագործության մեջ ամերիկահայ իրականության պատկերման որոշ էական եզրեր: Ձուգահեռներ են անցկացվում Զամաստեղի և Վ. Թորովենցի, Ա. Զայկազի, Բ. Նուրիկյանի, Վ. Զայկի, Վ. Շուշանյանի համանման թեմատիկայի գեղարվեստական յուրացման և հատկապես ամերիկահայ մարդու կերպավորման առանձնահատկությունների միջև: Վիճարկելով ամերիկյան խորթ միջավայրում հայտնված գյուղական հովվերգական աշխարհի, երկրի ու հողի մարդկանց պատկերող Զամաստեղի գրականության մասին եղած ինչ-ինչ տեսակետներ՝ գրականագետը եզրակացնում է, որ Զամաստեղը իր հերոսների պատկերման միջոցով հասնում է հայի գոյատևման առեղծվածի, ազգային նկարագիրն անխաթար պահելու առավել էական և խորքային պարզաբանումների:

Առհասարակ, ներկա ժողովածուն հարստացնում է վերոհիշյալ գրողների մասին եղած տեղեկատվական իրազեկությունը և նրանց ստեղծագործության ինչ-ինչ կողմերի վերլուծական բացահայտումներով ընդլայնում է գրականագիտական պատկերացումների շրջանակը: